

ՀԱՅ ԼԵՋՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՋԸ

(Հրաշյա Աճառյանի ծննդյան 90-ամյակի առթիվ)

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս ի. Ս. ՂԱՐԻԲՅԱՆ

Ակադեմիկոս Հրաշյա Հակոբի Աճառյանը իր կյանքի 77 տարիներից 62-ը նվիրել է հայագիտական հետազոտություններին: Նրա գրչին են պատկանում քանասիրական բազմաթիվ հոդվածներ, գրքեր, մենագրություններ: Սակայն նրա աշխատությունների մեծագույն մասը նվիրված է հայ լեզվաբանությանը: Իր գրած աշխատությունների քանակով նա գերազանցում է բոլոր լեզվաբան հայագետներին:

Հ. Աճառյանը զբաղվել է հայ լեզվաբանության համարյա բոլոր բնագավառներով: Նա գրել է ընդհանուր լեզվաբանության ամենաընդարձակ գիրքը՝ հարուստ օրինակներով և ընդհանրացումներով: Իրեն հատուկ պարզությամբ, համեմատական լեզվաբանության տեսանկյունով շոշափել, լուծել է բազմաթիվ հարցեր, գրել է ութ հատորանոց «Լիակատար քերականություն հայոց լեզվի 562 լեզուների համեմատությամբ»: Իր «Հայոց լեզվի պատմություն» երկ-հատոր աշխատությամբ առաջին անգամ լինելով՝ ստեղծել է հայոց լեզվի պատմության ընդհանուր ուրվագիծ:

Հ. Աճառյանը մեծ կոմպարատիվիստ է, հնդեվրոպական համեմատական լեզվաբանության խոշորագույն մասնագետ, և այդ տեսակետով էլ քննում է հայ լեզվաբանության, այլև ընդհանուր լեզվաբանության հարցերը: Ամենաբարդ լեզվաբանական հասկացությունները Հ. Աճառյանը շարադրում է այնքան դյուրամբուհելի և հասկանալի, որ նյութը մատչելի է դառնում յուրաքանչյուր ընթերցողի:

Մի հոդվածի սահմաններում դժվար է ընդգրկել Հ. Աճառյանի բոլոր աշխատությունները, վերլուծել և գնահատել դրանք, ուստի, մենք այստեղ խոսելու ենք Հ. Աճառյանի բառագիտական և բարբառագիտական աշխատությունների մասին, մյուսները թողնելով այլ պատեհ առիթի:

1

1837 թ. սկսած, երբ Պետերմանը գրեց հայերենի քերականությունը¹ և արտահայտեց այն միտքը, թե հայոց լեզուն հնդեվրոպական լեզու է, գիտնականները զբաղվեցին հայերենի բառերի ստուգաբանության և հայոց լեզվի հնդեվրոպական տարրերը պարզաբանելու, ճշտելու և երևան բերելու հարցերով: Բնական է, որ նյութի կուտակմանը զուգընթաց կարիք պիտի զգացվեր կազմելու հայերենի արմատական բառաշան: Առաջինը այդպիսի բառարան կազմեց դը

¹ Petermann, Grammatica linguae armeniacae, Berlin, 1837.

Հագարդը² նրա բառարանը ամփոփում էր երկու հազար բառարմատ. այդտեղ մտնում էին թե՛ հնդեվրոպական արմատներ և թե՛ հայերենի փոխառությունները այլ լեզուներից։ Դր Հագարդի աշխատանքը կազմելու ժամանակ հայոց լեզվի մասին տիրում էր այն կարծիքը, թե նա իրանական ճյուղի պատկանող լեզու է, ուստի դր Հագարդի արմատական բառարանն էլ իր վրա կրում էր այդ կնիքը։ 1875 թ. դերմանացի գիտնական Հ. Հյուբշմանը ապացուցեց³, որ հայոց լեզուն ոչ թե իրանական ճյուղին է պատկանում, այլ ներկայացնում է հնդեվրոպական լեզվաընտանիքի ինքնուրույն մի ճյուղ։ Այդ մի հեղաշրջում էր հայոց լեզվի ուսումնասիրության պատմության մեջ։ Ավելի ուշ Հ. Հյուբշմանը դրեց հայոց լեզվին նվիրված մի մեծ հետազոտություն, որ կոչվում է «Armenische Grammatik» (Leipzig, 1895—97), սակայն դա իսկությամբ հայոց լեզվի երկրորդ արմատական բառարանն էր։ Հյուբշմանը ստուգաբանեց 438 հնդեվրոպական արմատներ, որով և ապացուցեց իր թեզը։

Հյուբշմանից հետո հայերենի լավագույն հետազոտողներ դարձան Անտուան Մեյեն, Պեդերսենը, Լիդենը, Պատրուբանին, Պետերսոնը և այլք, որոնք զբաղվեցին հայոց լեզվի բառարմատների հարցերով, յուրաքանչյուրը ստուգաբանման ենթարկելով ավելի կամ պակաս թվով բառեր, ուստի հայերենի ստուգաբանված բառերի թիվը XIX դ. վերջերին հասնում էր արդեն հազարների։

1891 թ. սկսած հայոց լեզվի ստուգաբանության հարցերով սկսեց զբաղվել նաև երիտասարդ Հ. Աճառյանը. այդ պահից նա հետևում էր հայոց լեզվին՝ նվիրված գիտական զբաղանքներ, և զրի առնում բոլոր հետազոտողների աշխատությունների արդյունքները։ Թե՛ իր նախորդների և թե՛ իր ժամանակակիցների բոլոր ստուգաբանությունները քննելով՝ Հ. Աճառյանը տալիս էր իր դրական կամ բացասական եզրակացությունը և զետեղում իր ձեռնարկած աշխատության մեջ։ Այսպես կուտակելով նյութերը՝ նա պատրաստում էր հայերենի արմատական բառարան։ Սկզբում այդ բառարանը փոքրածավալ էր, բայց զնալով ընդարձակվեց։ Յուրաքանչյուր անգամ, երբ կուտակվում էին նոր նյութեր, երբ իր եզրակացությունները լուրջ փոփոխություններ էին մտցնում իր կազմած բառարանի մեջ, նա նորից արտագրում էր ամբողջ բառարանը։ Իր վկայությամբ արմատական բառարանը արտագրված է հինգ անգամ։

Արմատական բառարանի վրա կատարված աշխատանքը 1921—22 թթ. արդեն ավարտված էր, և երբ 1922 թ. Աճառյանը հրավիրվեց Սովետական Հայաստան աշխատանքի, նա իր հետ բերեց յոթ հատորանոց այդ բառարանը։

1926 թ. Հ. Աճառյանը հնարավորություն ստացավ հրատարակելու այն բայց դժբախտաբար այն ժամանակ մենք Երևանում չունեինք տպագրական խոշոր բազա։ Նախորդներից ոչինչ չէինք ստացել, նոր տպագրական հնարավորություններն էլ այնքան էին, որ հազիվ բավականացնում էին մամուլը և ամենաանհրաժեշտ դրերը տպագրելու դեմքին։ Բայց Աճառյանը միջոցը գտավ. Նա համաձայնության եկավ համալսարանի վարչության հետ իր «Հայերեն արմատական բառարան» հրատարակելու ապակետիպ, սակայն այնպես, որ դա պետության վրա մեծ ծախս չնստի։ Քանի որ Հայաստանն այդ ժամանակ ծով կարիքների մեջ էր, Հ. Աճառյանը կատարեց երկու սխրագործություն՝ գիտա-

² P. de Lagard, Armenische studien, Göttingen, 1877.

³ H. Hübschmann, Über die stellung des Armentischen im Kreise der indogerm. sprache, KZ, v. 23, 5—42.

կան և քաղաքացիական: Նա կազմեց ասպակետիպի աշխատողների խումբ 5—6 հոգուց բաղկացած, հանձն առնելով տալու նրանց բոլորի աշխատավարձը՝ բառարանի եկամտի հաշվին: Գիտենք, որ որևէ գործ ասպակետիպ հրատարակելու համար անհրաժեշտ է ձեռագիրն արտագրել հատուկ թանաքով, ասպահանել ձեռագրի պատճեններ ասպակու վրա և գլանիկով այդ պատճեններ բազմացնել:

Արտագրությունը բավական դժվարին և թանկ գործ է: Հ. Աճառյանը հանձն առավ այդ 8000 էջը ինքն արտագրելու, որպեսզի ավելորդ ծախսեր չարվեին: Եվ ահա նա 1926 թ. սկսեց արտագրել իր Արմատական բառարանը ասպակետիպի համար, միաժամանակ վերամշակելով և լրացնելով բնագիրը: Աշխատանքը տևեց մինչև 1932 թ.: Տպագրված բառարանից Հ. Աճառյանը իր համար վերցնում էր 150 օրինակ (մոտավորապես այդքան անձինք էին բաժանորդագրվել բառարանին): Յուրաքանչյուր պրակը Հ. Աճառյանն անձամբ ինքն էր հանձնում իր բաժանորդներին, ստանում արժեքը և այդ ձևով գոյացած գումարով վճարում աշխատողների ամսական վարձատրությունը:

Հայերենի արմատական բառարանին ծանոթացողը կնկատի, որ նրա յուրաքանչյուր բառահոգվածը մի իսկական անկախ հետազոտություն է և կազմված է հետևյալ կերպ. գլխաբառից անմիջապես հետո տրվում է նրա բացատրությունը, նշանակությունը, ինչպես որ ընդունված է բառարաններում: Դրանից հետո տվյալ արմատի գործածության շուրջը բերվում են օրինակներ: Օրինակներն առնվում են ամենից առաջ V դ. մեսրոպյան շրջանի գրականությունից: Հ. Աճառյանը հատկապես ընտրում է եզնիկյան դպրոցի հեղինակների բնագրերից, բայց եթե չի գտնում այդտեղ, առնում է եփրեմյան և կյուրեղյան դպրոցների հեղինակներից: Սակայն երբ արմատը V դ. գործածված չէ, հեղինակը հիշատակում է հետին ժամանակների աղբյուրները և ավելացնում՝ «հետին» բառը: Յուրաքանչյուր անգամ օրինակը բերելիս հեղինակը նշում է տվյալ տեքստում արմատի նշանակությունը կամ առումը: Եթե օրինակները շատ են, ասպա նրանք դասավորվում են այնպես, որ հաջորդ նշանակությունը բխում է նախորդից. դրա հետևանքով աստիճանաբար նշվում են բառի իմաստի կամ առումների փոփոխությունները, մինչև հանգում են այն իմաստին, որն այժմ ունի տվյալ բառը: Այսպիսով, օրինակների միջոցով աստիճանաբար ցուցադրվում են բառի կամ արմատի իմաստային փոփոխությունները սկսած V դ. մինչև ամենաուշ ժամանակները, երբ բառի կամ արմատի իմաստը կայունացել է հասել մեզ:

Բառահոգվածի այս հատվածը կազմելու համար Հ. Աճառյանն օգտագործել է նոր Հայկազյան բառարանի օրինակները, ինչպես և Աստվածաշնչի համաբարբառը: Սակայն դրանով նա չի բավականացել: Հայկազյան բառարանի մեջ գործածված արմատների ցանկը լրացնելու, ինչպես և ստուգությամբ պարզելու համար, թե արմատը որ ժամանակից է գործածված հայ գրական լեզվի մեջ, Հ. Աճառյանը ուշի-ուշով կարդացել է ամբողջ հայ հին մատենագրությունը և գտել բազմաթիվ նոր արմատներ ու ճշտել արմատի գործածության ստույգ ժամանակն ու աղբյուրը: Դա, իրոք, այնպիսի մի աշխատանք է, որին ընդունակ էր միայն Հ. Աճառյանը: Այդ ծանր աշխատանքի կարիքը չէր լինի, եթե ունենայինք ամբողջ զրաբար մատենագրության համաբարբառ քարտարանը:

Իրոք, ինչ պատրաստության, հայերենի բառարմատների ինչպիսի՞ գիտականության տեր պիտի լինի մարդը, որպեսզի կարողանա զրաբար տեքստերի մեջ նոր, անհայտ արմատներ հայտնաբերել:

Բառահոգվածի երկրորդ մասը սկսվում է = նշանով և հանդիսանում է նրա հիմնական, ամենաէական մասը՝ ստուգաբանությունը՝ ֆոնետիկ արմատի ծագումը, հեղինակը նշում է նրա բնիկ հայերեն կամ փոխառու լինելը։ Եթե արմատը բնիկ հայերեն է, ապա բերվում է նրա հնդեվրոպական նախամայր լեզվի ենթադրյալ ձևը՝ իր բուն նշանակությամբ, ապա նաև բոլոր այն ձևերը, որոնք գոյություն ունեն հնդեվրոպական քույր լեզուներում։

Արմատի ստուգաբանության ընթացքում պարզվում է, թե հայերեն ձևը որին է ամենից ավելի մոտ և ինչու։ Յուրաքանչյուր լեզվից վկայություն բերելով՝ հեղինակը միաժամանակ նշում է, թե ի՞նչ նշանակություն ունի արմատն այդ լեզվում և ինչով է այդ նշանակությունը կապվում հայերենի հետ։ Ստուգաբանության այդ բաժինը ամենաարժեքավորն է ամբողջ բառահոգվածում։ Բառահոգվածի այս հատվածը կազմելու համար Հ. Աճառյանը կարդացել է աշխարհում լույս տեսած հայ լեզվաբանությանը նվիրված համարյա բոլոր աշխատությունները, հոգվածները, զրքերը, թվով շուրջ 4000, ստուգել ուրիշների եզրակացությունները և միայն դրանից հետո զետեղել իր բառարանում։ Բառահոգվածի ստուգաբանության հատվածի վերջում հիշատակվում է արմատը՝ ճիշտ մեկնողի՝ ստուգաբանողի անունը, այդ թվում նաև իր անունը, եթե ինքն է ստուգաբանել արմատը։

Յուրաքանչյուր ոք, ով ստուգաբանում է որևէ բառ, հավատում է, որ իր ստուգաբանությունը ճիշտ է, սակայն Հ. Աճառյանը այդպիսին չէր։ Ես վկա եմ, թե ինչպես յուրաքանչյուր արմատն ստուգաբանելուց հետո նա նամակով հայտնում էր Ա. Մեյլին իր հիմնավորումները և ստանում սովորաբար դրական պատասխան։ Անտուան Մեյլեն, Հ. Աճառյանի ուսուցիչը, հնդեվրոպական լեզվաբանության ամենախոշոր սյուներից էր։ Նա կատարելապես տիրապետում էր հնդեվրոպական բոլոր մայր լեզուների ներքին օրինաչափություններին, ուստի համեմատական լեզվաբանության օրենքները կիրառում էր ամենագերադանց պերպրով։ Ահա ինչու Հ. Աճառյանի համար նրա վճիռը վերջնական էր և հեղինակավոր։ Եվ երբ Հ. Աճառյանը ստանում էր Ա. Մեյլի հավանությունը, այլևս չէր կասկածում իր ստուգաբանության ճշտության վրա և վստահորեն նշում էր իր հեղինակալին իրավունքը։

Բառահոգվածի երրորդ հատվածը նվիրված է բառին վերաբերող մատենագիտական նշումներին։ Այսինքն՝ այս հատվածում Հ. Աճառյանը նշում է, թե որ հեղինակը իր որ աշխատության մեջ ինչ է ասել տվյալ բառի մասին, ցույց տալով աշխատության անունը, էջը և հրատարակության վայրը։ Մյուս բոլոր բաժիններից այս բաժինը նրանով է տարբերվում, որ այստեղ բերվում են Հ. Աճառյանի կողմից շրնդունված ստուգաբանությունները։

Բառահոգվածի չորրորդ հատվածը նվիրված է այն հարցին, թե այս արմատն ինչպիսի գործածություն ունի բարբառների մեջ, ըստ որում տրվում է բառի բարբառային տառադարձությունն այնպիսի հմտությամբ, որ դժվար է որևէ թերություն գտնել։ Միաժամանակ հեղինակը տալիս է նաև բառի այն իմաստները, որ ընդունել է բառը զանազան բարբառներում, անգամ որոշ դեպքերում նաև բառի ածանցումները։ Բհարկե, չի մոռանում հիշեցնելու բառի այժմյան գրական ձևերը։ Բառահոգվածի այս մասը կազմելու համար Հ. Աճառյանը թափել է նույնքան քանք, որքան նախորդ հատվածները կազմելիս։ Չէ՞ որ մինչև Հ. Աճառյանը գիտական բարբառագիտություն չունեինք։ Գրականության մեջ էլ բարբառները չեն արձանագրված գիտական տառադարձությամբ,

ուստի «...պետք էր դիմել սևփական աշխատության», խոստովանում է Հ. Աճառյանը: «Ճամփորդելով քաղաքից քաղաք (Նոր-Ջուղայից մինչև Ռոդոսթո) տեղի վրա կամ տեղի գիտակ անձերի աջակցությամբ կազմեցի 30 գավառականի (բարբառ և ենթաբարբառ) ամբողջ բառացանկը, որ ներմուծել եմ այստեղ» (Հայերեն արմատական բառարան, հատոր 7, էջ 23): Այդպիսի գործ կատարելուն ընդունակ էր միայն Հ. Աճառյանը:

Նվ, վերջապես, բառահոգվածի ամենավերջին հատվածում հեղինակը տեղեկություններ է տալիս, թե տվյալ արմատը հայերենից որ լեզվին է անցել, դնում է այդ լեզվի ձևը այդ իսկ լեզվի գրերով ու տալիս բացատրություն: Թե հայերենի և թե հայերենից վերցրած ուրիշ լեզուների փոխառությունը քննելիս Հ. Աճառյանը շատ մեծ խնամքով բացատրում է արմատի փոփոխության պատճառները մեր կամ օտար լեզվում: Ու երբ կարդում ես ամբողջ բառահոգվածը, այլևս կասկած չի մնում, որ Հ. Աճառյանի ամբողջ շարադրանքն սպառիչ է:

Հ. Աճառյանը իր Հայերեն արմատական բառարանում ղեկավարել է շուրջ 11 հազար արմատ: Այդ արմատների շուրջ 40—50 տոկոսը ստուգաբանված չէ: Բայց Հ. Աճառյանը, դրանք ևս ղեկավարելով իր Արմատական բառարանում, նշել է նրանց գործածության աղբյուրները և նրանց նշանակությունները: Իսկ այն արմատները, որոնք ստուգաբանված են, Հ. Աճառյանը ղեկավարել է որոշ նշումներով: Խաչ է դրել հնդեվրոպական արմատների, աստղ՝ փոխառյալ բառերի և շրջան՝ բնաձայն բառերի կողքին: Իսկ այն բառերի մոտ, որոնց ստուգաբանության մեջ Հ. Աճառյանը վստահ չէ, դրել է պիծ, հույս ունենալով, որ Արմատական հրատարակելուց հետո ինքը կճշտի դրանց նշանակությունները:

Արմատական բառարանի մեջ ղեկավարված շուրջ 11 հազար արմատներից Հ. Աճառյանը ստուգաբանել է 1688-ը (այդ թվում 158 հնդեվրոպական արմատներ): Դա հայերենի ստուգաբանված արմատների մոտավորապես մի երրորդն է, այսինքն այնքան, որքան ստուգաբանել են տասնյակ այլ հեղինակներ միասին վերցրած:

Հ. Աճառյանի ստուգաբանած արմատներն ունեն մի առանձնահատկություն ևս. նրանք շատ ավելի ղեկավարությամբ ճանաչելի են, քան նախորդների ստուգաբանած արմատները: Հ. Աճառյանի նախորդները վերցրել են այն ամենը, ինչ որ եղել է մակերեսին, ուստի Հ. Աճառյանը ստուգաբանություն կատարելու համար պետք է շատ խոր թափանցումներ կատարեր:

Հնդեվրոպական 158 արմատների վրա պետք է ավելացնել Հ. Աճառյանի ստուգաբանած 150 բնաձայն բառերը:

Հայերեն արմատական բառարանի լույս ընծայումը մեծ հետաքրքրություն առաջացրեց հայագետների միջավայրում, եղան և գրավոր արձագանքներ: Դեռ պաղ ժամանակներում, ծանոթանալով ձեռագրին, Ն. Մառը իր գրախոսականում նշել էր, որ դա «... ценное справочное пособие, подобного которому нет ничего не только в армянской, но и в европейской научной литературе» (Հայերեն արմատական բառարան, հատ. VII, էջ 202): Մխիթարյան բանասերներից Հ. Ն. Ակինյանն իր ընդարձակ գրախոսականն ավարտում է հետևյալ խոսքերով. «Նա (Հ. Աճառյանը) տված է աշխատություն մը, որ կմնա աննախընթաց օրինակ, նույնիսկ համաշխարհային գրականության մեջ»⁴: Իսկ աշխարհի մեծագույն լեզվաբաններից մեկը՝ Անտուան Մեյեն գրում է. «Ոչ մի

⁴ «Հանդես ամսօրյա», 1930, էջ 482—498:

լեզվի համար չկա այսքան ճոխ, այսքան կատարյալ ստուգաբանական բառարան»⁵։

Այսպես է Հ. Աճառյանի Հայերեն արմատական բառարանը, մեր լեզվաբանության գլուխ-գործոցը, որի վրա հեղինակն աշխատել է քառասուն տարի։

«Արմատական բառարան»-ից բազի Հ. Աճառյանն ունի «Անձնանունների բառարան», որը Արմատականի յուրովի շարունակությունն է։ Անձնանունների բառարանը բաղկացած է 5 հատորից և ամփոփում է իր մեջ բոլոր այն հայկական անձնանունները, որոնք կան որեւէ հրատարակության կամ ձեռագրի մեջ։ Ինչպես իր բոլոր գործերի, այնպես էլ այս աշխատության պատրաստման հարցում Հ. Աճառյանը կատարել է սպառնալի աշխատանք։ Անձնանունների բառահոգվածը կազմված է յուրօրինակ և յուրատեսակ։ Անձնանունից անմիջապես հետո տրվում է ստուգաբանությունը և ասյա ծագումը՝ բացատրելով, թե ի՞նչ է նշանակում այդ հատուկ անունը։ Հ. Աճառյանը այնուհետև նշում է, թե որտեղից է այդ անունը մտել հայոց լեզվի մեջ։ Պարզվում է, որ մեր բազմաթիվ անձնանուններ վերցված են պարսկերենից, հունարենից, եբրայերենից, արաբական լեզվից և այլն։

Մեր անձնանուններից շատերը հայերենով չեն ստուգաբանվում, ինչպես և փոխառնված հասարակ անունները։ Դրանց ստուգաբանությունը կարելի է կատարել փոխատու լեզվով։ Հ. Աճառյանը և նրա նախորդները կատարել են այդ, և մենք իմանում ենք, որ պարսկերենից փոխառնված Դուրգեն անձնանունը նշանակում է «զայլի պես քաջ», Երուանդ նշանակում է «քաջ», «քաջընթացիկ», հունարենից փոխ առնված Բեռա անձնանունը նշանակում է «երկրագործ», լատիներենից առնված Բեռալիս անձնանունը նշանակում է «պատվավոր, հարգելի», եբրայական լեզվից առնված Դավիթ անձնանունը նշանակում է «սիրեցյալ» և այլն։

Հատուկ անվան ստուգաբանությունից հետո բառահոգվածում նշվում է, թե տվյալ հատուկ անունը որ աղբյուրի մեջ է հիշատակված, ասյա նաև ի՞նչ տեղեկություններ կան այդ անձնավորության մասին։

Հ. Աճառյանը մանրամասն գրում է նրանց մասին, ովքեր պատմական անձնավորություններ են՝ գրող, հասարակական, զինվորական, պետական գործիչ, գիտնական և այլն։ Այսպես, օրինակ, Գրիգոր անունը գրականության մեջ պատահում է 745 անգամ, այդքան անգամ էլ գրված է Անձնանունների բառարանում։ Հեղինակը յուրաքանչյուրի մասին առանձին գրելով նշում է, թե որտեղ է հիշատակվում տվյալ հատուկ անունը և ասյա խոսում այդ անունը կրող անձնավորության մասին։ Օրինակ, Հ. Աճառյանը «Գրիգոր» անձնանվան բաժնում ընդարձակ խոսում է Գրիգոր Լուսավորչի, Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Տղայի և այլ բազմաթիվ գրիգորների մասին։ Այդ միջոցով Հ. Աճառյանի Անձնանունների բառարանը դառնում է աղբյուրագիտական մի ընդարձակ տեղեկատու պատմական անձնավորությունների և նրանց հետ կապված պատմական դեպքերի ու իրադարձությունների մասին։

Հինգ հատորանոց այդ բառարանը կազմելու համար հեղինակը, առանց կասկածի, պետք է օգտագործած լինի շատ հազարների հասնող աղբյուրներ։ Եթե նկատի ունենանք, որ դրանց կեսից ավելին ձեռագրեր են, այն ժամանակ պարզ կերևա Հ. Աճառյանի կատարած գիտական սխրագործությունը։ Անձնա-

նունների բառարանը մեկ գործ չէ, այլ մի քանի համակցված գործեր, որոնք միասին կազմում են հայ անձնանունների հանրագիտարան:

2

2. Աճառյանի նախորդները «բարբառ» հասկացության մասին հստակ գաղափար չունեին, և ունենալն էլ դժվար էր: Համաժողովրդական լեզվի յուրաքանչյուր տարբերակ, որ քիչ թե շատ զանազանություն ունի գրական լեզվից, կարող է «բարբառ» կոչվել: Ընդհանրապես «բարբառ» բառը հստակ իմաստ չի ունեցել և չունի գիտության մեջ: «Բարբառ» ասելով հասկացել են գրական լեզվից տարբերվող տեղական խոսելաձև, հետևաբար որքան վայր և տեղ, այնքան էլ բարբառ: Եթե հարկ է լինում հիշատակելու որևէ տեղի խոսվածք, սովորաբար ասում են «բարբառ»: Նույնիսկ յուրաքանչյուր գյուղի խոսքի տեսակը, խոսելաձևը կոչվում է «բարբառ»: Բայց դա «բարբառ» բառի, եթե չասենք գոհհիկ, բայց պարզունակ ըմբռնումն է: Եթե որևէ մեկը իր գրական լեզվի մեջ բարբառային ձևեր է օգտագործում, ասում ենք, թե նա բարբառով է խոսում: Մինչդեռ «բարբառ» բառի գիտական ըմբռնումը բոլորովին այլ է: «Բարբառ» ըմբռնումը սահմանագծում է հայոց լեզվի տարբերակը ոչ միայն գրական լեզվից, այլև իր նմաններից, այսինքն՝ «բարբառ» ասելով պետք է հասկանալ հայերենի մի այնպիսի տարբերակ, որ սահմանագծվում է և՛ գրական լեզվից, և՛ մյուս իր նմաններից լեզվական որոշակի օրինաչափություններով, այնպիսի օրինաչափություններով, որոնք հատուկ են նրան կամ նրա խմբին: Հասկանալի է, որ հայոց լեզվի որևէ տարբերակ «բարբառ» կոչելու համար անհրաժեշտ է գտնել այն հատկանիշները, որոնք հատուկ են նրան և զանազանում են նրան մյուս լեզվական տարբերակներից: Օրինակ, Այրարատյան բարբառ ասելով հասկանում ենք հայերեն խոսքի այն տարբերակը, որը ներկան կազմում է «ում» վերջավորություն ունեցող անկատար դերբայով և օժանդակ բայով, ունի ներգոյական հոլով՝ «ում» վերջավորությամբ, ունի օժանդակ բայի ներկա և անցյալ ժամանակներ և այլն:

Սակայն «բարբառ» ըմբռնումը ճշտելու համար անհրաժեշտ է նախ՝ հայոց լեզվի տարատեսակների մեջ գտնել խմբեր, որոնք միմյանցից տարբերվում են ակնբախ հատկանիշներով: Այդ հատկանիշները սահմանագծում են միմյանցից բարբառային ամբողջ խմբեր: Այդ խմբերից յուրաքանչյուրի մեջ խոսքի կամ խոսվածքի ամեն մի տեսակ կարող է արդեն հեշտությամբ տարբերակվել մյուսներից, և այդպիսով երևան կգան հայերենի բարբառները իբրև առանձին-առանձին միավորներ, հայերեն խոսքի ինքնուրույն տեսակներ: Միայն այս ձևով հնարավոր էր գտնել և որոշել հայոց լեզվի բարբառները, ճանաչել դրանք և ուսումնասիրել որպես հետազոտական օբյեկտներ:

Այս է գիտական մոտեցումը. այսպիսի մոտեցում 2. Աճառյանի նախորդները չունեին: Ճիշտ է, Քերովբե Պատկանյանը փորձել է նկարագրել 8 բարբառ՝ ջանալով երևան հանել նրանց առանձնահատկությունները, բայց քանի որ նա բարբառախմբերը չէր ճանաչում, ուստի շփոթում էր բարբառներն իրար հետ: 2. Աճառյանը գնաց բոլորովին այլ ճանապարհով և, կարծում ենք, միակ գիտական ճանապարհով: Նա ջանաց նախ սահմանազատել միմյանցից բարբառների մեծ խմբեր, ապա յուրաքանչյուր խմբի մեջ գտնել շոշափելի տարբերություն ունեցող առանձին միավորներ և գիտակցել դրանք իբրև բարբառ-

սեր: Ահա այդ նպատակով նա կատարեց հայ բարբառների առաջին դասակարգումը: Դասակարգման համար անհրաժեշտ էր գտնել այնպիսի մի կարևոր հատկանիշ, որը ցայտուն կերպով տարբերում է բարբառախմբերը միմյանցից, և միաժամանակ սահմանագծում նրանց մի շարք հատկանիշներով: Այդպես են վարվել նաև այլ լեզուների բարբառների ուսումնասիրության գործում: Ոմանք ընդունել են աշխարհագրական սկզբունքը (գերմանական բարբառագիտություն), ոմանք ընտրել են ձայնավորների տարբերությունները (ռուսական բարբառագիտություն), ոմանք՝ նույնիսկ առանձին բառեր (ֆրանսիական բարբառագիտություն) և այլն: Հ. Աճառյանն ընտրեց ձևաբանական հատկանիշը, և այդ ընտրությունը զարմանալի կերպով արդարացրեց իրեն:

1909 թ. ֆրանսերեն հրատարակած իր մի հոդվածում⁶ նա առաջարկեց բարբառների խմբավորման սկզբունք ընդունել ներկա ժամանակի կազմությունը: Դա հայտնագործություն էր: Մինչև Հ. Աճառյանը բարբառների մեծ խմբերի տարբերությունը նկատում էին, գտնում էին, որ մենք ունենք արևմրտահայ և արևելահայ բարբառներ: Ք. Պատկանյանը նրանց տարբերող հատկանիշն էլ նշեց («ում» և «կը»), բայց դա չդարձրեց իր հետազոտությունների ելակետը, այսինքն՝ նրա համար դա դասակարգում չէր և ուրեմն գիտական դրույթ չէր: Հ. Աճառյանի համար բարբառների դասակարգումը գիտական դրույթ էր և հետազոտություններ ծավալելու ելակետ, ուստի միայն նրան պիտի համարել հայ բարբառների ճիշտ դասակարգման հեղինակը:

Ձևաբանական սկզբունքով դասակարգելով բարբառները, Հ. Աճառյանը հայտնաբերեց հայ բարբառների երեք ճյուղ, որոնցից մեկը կոչեց «ում» ճյուղ, երկրորդը՝ «կը» ճյուղ և երրորդը՝ «էլ» ճյուղ: Խմբավորումը կատարելուց հետո նա սկսեց որոնումներ՝ ինքնուրույն բարբառ կոչվելու իրավունք ունեցող խոսվածքները երևան բերելու համար, այսինքն՝ որոշելու, թե քանի՞ բարբառ ունի հայոց լեզուն. և նա հայտնաբերեց իր ժամանակի համար առավել շատ՝ 31 բարբառ: Երբ դասակարգման սկզբունքը կա, գիտական ըմբռնումով բարբառ գտնելու գործը շատ ավելի հեշտանում է, քան եթե այդ սկզբունքը չկա: Այսպես, երբ լսում ես որևէ տարբերակ, առաջին հերթին գտնում ես, թե ո՞ր ճյուղին է պատկանում: Ծյուղը որոշելուց հետո քննում ես բարբառի հիմնական գծերը՝ որոշելու համար, թե որքա՞ն դրանք նույնանում են քեզ հայտնի նույն ճյուղի բարբառներին, որքանով նրանցից տարբերվում: Երբ գտնում ես բավական քանակությամբ տարբերություններ, ապա շատ հեշտ է լինում այդ խոսվածքը որպես առանձին բարբառ առանձնացնել: Երբ, սակայն, այդ տարբերությունները շատ չեն՝ կամ նվազ ցայտուն են, այդ դեպքում գործ ունես ոչ թե բարբառի, այլ խոսվածքի հետ: Հեշտությամբ կարելի է որոշել նաև, թե առկա լեզուական ո՞ր բարբառի խոսվածք կարելի է համարել: Եթե իր հիմնական հատկանիշներով, օրինակ, նման է Կարնո բարբառին, բայց երկրորդական հատկանիշներով տարբեր է, ապա մենք գործ ունենք Կարնո բարբառի խոսվածքի կամ ենթաբարբառի հետ: Ահա այս մեթոդը կիրառելով, Հ. Աճառյանը սահմանեց հայերենի 31 բարբառ և 101 ենթաբարբառ: Բայց այդ բոլորը կատարելու համար անհրաժեշտ էր հսկայական աշխատանք: Բարբառների մասին գաղափար կազմելու նպատակով պետք է լինել բարբառային միջավայրում, բարբառախոսների հետ հանդիպել, խոսել, դրուցել, նրանց հարցափորձել, բացահայ-

⁶ Classification des dialectes arméniens par Adjarian, 1899, Paris.

տել առանձնահատկություններ, գտնել և արձանագրել լեզվական հետաքրքրական յուրահատկություններ, ապա ուսումնասիրություններն ի մի բերելով՝ ընդհանուր ամփոփում գրել: Հ. Աճառյանը սովորաբար վարվում էր հետևյալ կերպ. վերցնում էր գրաբար բառերի նվազագույն քանակը (մինչև 2000), հատկապես այնպիսի բառեր, որոնք հայերենի հիմնական բառաֆոնդի մեջ են մտնում, կազմում էր այդ բարբառի գրաբար-բարբառային բառարանը և դրանով որոշում բարբառի բառային կազմը և արտասանությունը, այսինքն՝ հնչյունաբանությունը: Այնուհետև վերցնում էր այդ բառերից բնորոշները և կազմում քերականական ձևեր, ապա գրի էր առնում տեքստեր և իր երևան բերած ձևերն ստուգում այդ տեքստերի միջոցով: Այնուհետև սկսում էր կազմել իր հետազոտությունները, վերջում տալիս էր տեքստեր և բառարանը: Այսպես կազմում էր նա իր մենագրությունները: Բայց նա, նախքան այդ մենագրությունները, կազմեց մի ամփոփիչ աշխատություն, որ կոչվում է «Հայ բարբառագիտություն»⁷: Էմինյան մրցանակ շահած այս աշխատությունը կազմելու համար Հ. Աճառյանը շրջել է շատ վայրեր: Լինելով պոլսեցի, նա ծանոթացել է Պոլսի և նրա շրջակայքի (Զմյուռնիա, Ռոդոսթո, Նիկոմեդիա և այլն) բարբառներին:

Հ. Աճառյանը եղել է Երևանում, Էջմիածնում, ուսուցչություն է արել Կարինում, Նոր-Բայազետում, Շուշիում, Նոր-Նախիջևանում, Թավրիզում, Նոր-Ջուղայում: Ամենուրեք նա հավաքել է բարբառային փաստեր, նյութեր է քաղել գրականությունից և պարբերականներից: Ստուգելով բոլորը, զետեղել է իր գրքում, տալով հայերենի 31 բարբառի համառոտ նկարագրությունը: Յուրաքանչյուր բարբառի նկարագրության սկզբին նշում էր նրա աշխարհագրական վայրը, բնակչության վիճակագրությունը, ապա այդ բարբառին հարող բնակավայրերի անունները: Այնուհետև համառոտ կերպով հաղորդում է հնչյունաբանական տեղեկությունները, նշելով ամենակարևոր տարբերակիչ հատկանիշները, որից հետո շարադրում է բարբառի համառոտ ձևաբանությունը, նույնպես նշելով ամենաակնառու առանձնահատկությունները: Վերջում բերում է տեքստեր այդ բարբառից, դրանից հետո՝ նաև տեքստեր այն գյուղերի խոսվածքներից, որոնք լեզվական տվյալներով ընկնում են այդ բարբառի ոլորտի մեջ: Նրա բերած բոլոր տեքստերը ֆոլկլորային արժեք ունեն կամ ժողովրդական բառ ու բանից են, համարյա բոլորն էլ կարդացվում են հաճույքով և ունեն շատ սրամիտ բովանդակություն:

Բացի «Հայ բարբառագիտություն» աշխատությունից Հ. Աճառյանը գրեց մենագրություններ՝ առանձին բարբառների հետազոտություններ: Իր բարբառագիտական մենագրությունները կոչելով «քննություն», նա գրեց «Քննություն Ագուլիսի բարբառի», «Քննություն Արաբկիրի բարբառի», «Քննություն Արտիալի բարբառի», «Քննություն Մարաղայի բարբառի», «Քննություն Նոր Նախիջևանի բարբառի», «Քննություն Նոր Զուղայի բարբառի», «Քննություն Պոլսո բարբառի»: Այս բոլոր հետազոտությունները կազմված են համարյա մի ընդհանուր պլանով: Հեղինակը սկզբից շարադրում է տեղեկություններ բարբառի աշխարհագրական դիրքի, վիճակագրական տվյալների և մատենագիտության

7 Հ. Աճառյան, Հայ բարբառագիտություն. ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների (բարբառագիտական քարտեզով). Էմինյան ազգագրական ժողովածու, հատ. Ը, №34 - 1911 թ.

շուրջը, ապա բարբառի հնչյունաբանությունը, յուրաքանչյուր օրենքի համար բերելով իր բառարանում եղած բոլոր օրինակները: Ամենայն մանրամասնությամբ զննելով բարբառային նյութերը, գտնում է օրինաչափություններ, և ապա դուրս բերում օրենքներ ու հաճախ կատարում հայտնագործություններ: Այսպես՝ Վանի բարբառը ուսումնասիրելիս նա հայտնագործեց «ա» ձայնավորի քմայնացման օրինաչափությունը, որ հետագայում կոչվեց «Աճառյանի օրենք»: Հնչյունաբանությունից անմիջապես հետո տրվում է ձևաբանությունը. շարադրված են նախ գոյականների հոգնակիները, ապա գոյականների հոլովումը, հոլովման օրինաչափությունները, ապա ածականները, թվականները, դերանունները և նրանց հոլովումները, այնուհետև՝ բայի խոնարհումը (բայի ըղձական ձևեր, անցյալ կատարյալ), դրանից հետո բերվում են դերբայները և ցույց տրվում բաղադրյալ ժամանակների կազմությունները: Այդ ամենն անում է սպառիչ մանրամասնությամբ: Հեղինակը ընդհանուր տեղեկություններ է տալիս մնացած խոսքի մասերի շուրջը, վերջում դնում տեքստեր և գրաբարից բարբառ բառարան: Ամեն մի այսպիսի հետազոտություն տալիս է բարբառի լրիվ պատկերը, միաժամանակ հայտնաբերելով առանձնահատուկ երևույթներ, որոնք լեզվաբանական արժեք ունեն կամ կարող են ծառայել իբրև նյութ հայոց լեզվի պատմության համար:

Հ. Աճառյանն իր այս աշխատություններով ստեղծեց բարբառագետների մի մեծ դպրոց. նրան հետևելով նոր բարբառագետները կազմեցին ու հրատարակեցին բազմաթիվ մենագրություններ, սակայն հայոց բարբառների ուսումնասիրությունը դեռ վերջացած չէ: Դեռ շատ բարբառներ կան, որոնք պետք է հայտնաբերվեն և ուսումնասիրվեն:

Հ. Աճառյանի ամենամեծ ծառայությունը հայ բարբառների դասակարգման սկզբունքը հայտնագործելն է: Այդ սկզբունքը հնարավորություն է տալիս նոր ու նոր բարբառներ հայտնագործելու և այդ բարբառները սահմանազատելու իր նմաններից: Եթե այդ սկզբունքը չլիներ, ստիպված պիտի լինեինք մեր բոլոր գյուղերի խոսքն ուսումնասիրել առանձին-առանձին և ապա բարբառների դասակարգում կատարել: Երա մեծ և խիստ ծանր աշխատանք կլիներ, մինչդեռ Հ. Աճառյանի դասակարգման սկզբունքը անմիջապես երևան է բերում բարբառի առանձնահատկությունը և օգնում հայտնագործելու ոչ միայն բարբառներ, այլև բարբառախմբեր: Այսպես, երբ հայտնի էր, որ հայ բարբառները, համաձայն նրանց ներկայի կազմության, ստորաբաժանվում են «ում», «էլ» և «կր» ճյուղերի, ուրեմն բոլոր այն բարբառները, որոնք այդ կազմությունը չունեն, պատկանում են ուրիշ ճյուղի: Այսպես հայտնագործվեց հայ բարբառների «ս» ճյուղը, քանի որ այդ բարբառներն իրենց ներկան կազմում էին ոչ թե «լ» լերջավորվող, այլ «ս» վերջավորվող դերբայով (մնալիս եմ, մնայս եմ, մնաս եմ և այլն): Եթե հայտնի է, որ «կր» մասնիկ ունեցող բարբառը, որի միջոցով կազմվում է ներկան, պատկանում է մի ճյուղի, ապա այլ մասնիկով կազմված ներկա ունեցող բարբառները պատկանում են մի նոր ճյուղի: Օրինակ՝ «կր դրեմ» ձևը «կր» ճյուղի բարբառին է հատուկ, բայց եթե գտնում ենք «կա գրեմ», «կամ դրիմ» ձևեր, ապա դրանք հանդիսանում են մի նոր ճյուղի պատկանող ձևեր, «կա» ճյուղի բարբառաձևեր: Այդպես էլ նաև «դրիմ ա», «հա դրիմ» ձևերը պատկանում են «հա» ճյուղի բարբառներին:

Այդպես հայտնագործվեցին հայ բարբառների «ս», «կա» և «հա» ճյուղերը: Երբ այդ ճյուղերը հայտնագործվեցին, երևան եկան նաև բարբառներ (Արամո,

խոտորջուր), որոնք իրենց ներկան կազմում են ոչ դերբայով, ոչ էլ մասնիկով, այլ գրաբարի նման: Եվ ահա հայ բարբառների ճյուղերի քանակը ավելացավ՝ հասավ 7-ի, որոնք հետո ենթարկվեցին լրացուցիչ խմբավորման:

Նկատելի է, որ հայ բարբառների ճյուղերից ևրեքը իրենց ներկան կազմում են դերբայի միջոցով (մնում եմ, մնալիս իմ, մնալ իմ), ուստի դրանք միացվեցին մի խմբի մեջ՝ «դերբայավոր խումբ» անվան տակ: Մյուս երեք ճյուղերն իրենց ներկան կազմում են մասնիկներով («կը», «հա», «կա»), ուստի կազմում են մասնիկավոր խումբ, իսկ երկու բարբառ (Արամո, խոտորջուր), որ իրենց ներկան կազմում են գրաբարի նման, կազմեցին գրաբարակերպ խումբ: Այսպիսով Հ. Աճառյանի դասակարգման ձևաբանական սկզբունքը մնում է անփոփոխ և ընկած է հայ բարբառների դասակարգման հիմքում, և ինչ որ կատարվում է Հ. Աճառյանից հետո, մի առանձին նորություն չէ, այլ նրա սկզբունքի հետագա կիրառումը՝ հայ բոլոր բարբառները հայտնաբերելու համար: Եթե Հ. Աճառյանի սկզբունքը ճիշտ չլիներ, հայերենի նոր բարբառներ չէին հայտնաբերվի, բայց հայտնաբերվեցին ոչ միայն նոր բարբառներ, այլև բարբառային նոր խմբեր ու ճյուղեր: Հայտնի է, որ տեսությունը ստուգվում է պրակտիկայով, տեսության ճիշտ լինելու անսխալ չափանիշն այն է, որ նրա հիման վրա կատարվում են գիտական նոր հայտնագործություններ: Հ. Աճառյանի սկզբունքի հիման վրա հայտնագործվեցին ավելի քան 20 նոր հայ բարբառներ և 4 նոր բարբառաճյուղեր:

Հ. Աճառյանի բարբառագիտական աշխատությունները մեծ նշանակություն ունեցան հայագիտության համար ընդհանրապես: Սրանք ոչ միայն ստեղծեցին ուղղություն, դպրոց, որը ծավալվեց և դարձավ բարբառագիտական մեծ դպրոց, այլ նաև լուծեցին հայոց լեզվի պատմության բազմաթիվ հարցեր: Հ. Աճառյանի փաստերը, նրա բարբառագիտական մեծագրությունների մեջ ամփոփված տվյալները հնարավորություն են տալիս կատարելու բազմաթիվ նոր հետազոտություններ և հանգելու կարևոր եզրակացությունների: Եթե չլիներ բարբառագիտության տեսության աճառյանական հստակությունը, հայերենի բարբառների ծով փաստերի միջից հնարավոր չէր օրինաչափություններ հայտնաբերել և դասակարգություններ կատարել: Մյուս կողմից՝ Հ. Աճառյանի «Հայ բարբառագիտություն» աշխատությունը և բարբառագիտական մեծագրությունները հայագիտությունը հասցրին բարձր մակարդակի, լեզվաբանական գիտության այժմյան մակարդակին: Եթե Հ. Աճառյանը կատարած չլիներ իր այդ աշխատանքները, շատ և շատ փաստեր անհետ կկորչեին մեր ժողովրդի կորած հատվածի հետ միասին: Այդ պատճառով էլ մեր գիտական նոր սերունդը, ինչպես և ամբողջ ժողովուրդը, մեծ երախտագիտությամբ պահում է իր սրտում Հ. Աճառյանի վառ հիշատակը:

КРУПНЕЙШИЙ ПРЕДСТАВИТЕЛЬ АРМЯНСКОГО ЯЗЫКОЗНАНИЯ

(К 90-летию со дня рождения Р. А. Ачаряна)

Академик АН Арм. ССР А. С. ГАРИБЯН

(Резюме)

Рачия Акопович Ачарян из 77 лет своей жизни 62 года посвятил арменоведению, главным образом армянскому языкознанию. Он первым из лингвистов-армян исследовал армянский язык на уровне современной науки.

Р. Ачарян впервые написал «Историю армянского языка» и «Армянскую диалектологию», а также десять монографий, посвященных отдельным армянским диалектам. Перу Р. Ачаряна принадлежит семитомный труд—«Корневой словарь армянского языка», объемом в 8 тысяч рукописных страниц (стеклографическое издание, последний том—печатное издание в 205 стр.). Труд этот поражает монументальностью, огромным количеством материалов и совершенством каждой из 11 тысяч словарных статей. Р. Ачаряном написан пятитомный труд—«Словарь личных имен», являющийся исключительным по богатству сведений о рукописных и печатных источниках древнеармянской, среднеармянской и новой армянской литературы. Им создана также восьмитомная «Полная грамматика армянского языка в сравнении с 562 языками» (вышло из печати пока пять томов). Р. Ачарян издал «Армянский диалектологический словарь» и «Словарь турецких заимствований в армянском языке».

В данной статье рассматриваются лишь лексикологические и диалектологические работы покойного академика Р. А. Ачаряна.